# ՔԱՐՈԶ

## ՎԱՐԱԳՈՅ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ*

Պատուական ուժոյն և ցուպ զօրութեան, անմոռանալի՛ նշոյն Յիսուսի. բազմաց հանգստի կոչ քաւարարի, գահիւք սիրալի նոր Յաղագմանի, սուրբ քառասայրի, զէն անբեկելի արեամբն Աստուծոյ միեալ հաւատի. սուրբ՝ աստուածազօր նշան պարծանաց քոց երկրպագուցս, անենի՛ պահապան՝ յաստիս և յաւուրն ահեղի, ահիթ կենաց անսպառ. Արդ բարեխօսեա՛ զանմեկնելի բարձրացեալն ի քեզ, հաշա լինել ընդ մեզ. Աղաչեմ:

Երբեմն ընկեցեալ զոլով քո յերկրի, յետ բարձրանալոյն ի քեզ Բարձրելոյն, արմատ օրհնութեան իբրև զանիծից, եւ զորձիդ կենաց, իբր զիայտ մահու մեծ սքանչելօք ցուցար՝ բերօղ զօրութեան անմահին Աստուծոյ, երկրպագելի զոլ և պաշտելի, յաւէտ իսկապէս զքեզ ծանուցեր: Ի մեծ թագաւորոյն Հռոմայ պատուեցար. յարութեամբ դամբէն ի քոցդ հրաշից մասն ի բոլորէն հատուածեալ, մեծին ի մեծէ՝ պարգև շնորհեցաք. յերուսաղեմէ զքեզ ի Հռոմ բարձեալ, եւ սիրելիներացն ի գլուխ հանգուցեալ, ի կողաստեղծին նախապատեցար, ծածկողդ ամենայն մարն առաջնոյն փայտիւ վտանկելոյ. Արդ բարեխօսեա՛ առ Ցեր վասն անձանց մերոց:

Ոսկիաքանդակ ծիրանագեցիկ, կայսերաբազմաւորեալ թագ պարծանաց, որոց բան ազգի պայազատութեան՝ ամենք ի յամենց զքեզ ընկալեալ, ուստի շառաւիղն ամենապայծառ ամենաչքնաղ կոյսն Հռիփսիմէ՝ ի հալածանաց ժամանակի՝ ի տարափախչելն իւրեանց յարեալ, զանկողոպտելի զանձդ աստուածային, առեալ ընծայէր անծանօթ ազգին, ի մութից արևու անմուտ արեգակն, աշխարհի Հայոց վերայ ծագեցար, յոր երկրպագեմք ընդ Հօր և Հոգւոյն զքրիստեանն ի քէն Աստուած բոլորից. Արդ բարեխօսեա և այլն:

Բահետ սպացմամբ լուսաթռիչ դնացիւք, դիմեալ յաշխարհ վաստակարական, հասեալ ի գաւառն Տո

կոչեցեալ, ի բարձրադիտակ լեառն Վարագայ խաչակրօնից սրբազգեստից, կառուցեալ հանդերձարան ի կատար լերինն, պանպատական թեւուց տարածմամբ օժանդակելով մարմնաւոր զուարթնոցն, որք յետ կատարման մեծ վկայութեանցն աւետարանելոյ ի Լուսաւորչէն, հրեշտակահանդէս փառաբանութեամբ զոլէին զփրկողն աշխարհի մահանալոյն ի քեզ. Արդ բարեխօսեա. և այլն:

Գերազանց չափոյ կշռութեանց ի քեզ խորհրդոյն Լամնանուէլի, անլուծ պնդութեամբ այրն աստուածային արժանի լինել հայրէր պաղատամամբ, բազմանառագայթ լուսոյն փայլատակումն, ի քէն տարածիւր ահաւոր հրաշիւք, ի յերկոտասան առաջս հոսմամբ, յաղթաարելով զլոյսն արևու. բուրումն անուշակ քրիստոսեան հօտին խառնեալ ընդ ձայնի հնչման հրեշտակացն, որով ուռճացեալ վայրն աստուածընկալ, բազդաւիւր լերինն թափորական նմանաւ սարաս ծաւալմամբ լուսոյ քեռ նշանակեալ զգալուստն վերջին:

Երբեակ անձնաւոր մեղ տէրութեան զոլով քարոզ քոյդ վերածագումն, ի յանշունչ նիւթոյ ձև. քառակոտ ասի զոլով քան բնութեան թանձր և վայր աբեր վեր քան զենութիւն հիմարաշ սքանչելեօք՝ թեւօք սուրբ Հոգւոյն

---

* Ընթերցողք յայտնի կը տեսնեն թէ այս քարոզիս հեղինակն Գէորգ անուամբ անէ մ'է. բայց թնչանէ այդ, արդեօք Սկեւռացին (ի ԺԳ. դարու) թէ Եղնիկացին (ի վերջ կոյս ԺԲ դարու) մեզ հաւանական կը թուի ըսել Եղնիկացին, ինչպէս և քանից ոճն հեշտաւուլ ցուցնեն զայդ:

digitised by A.R.A.R.@

բերեալ վերամբարձ շարժեալ ճոխաբար ի գլուխ վիմին, հրեշտակագումար դասուց բազմութեան թռուցեալ ակներեւ բոցակերպութեամբ հասեալ ի տեղի յարիւ աղօթիցն, համեցաւ բնակել(ի)նմա յարակայ. ըստ եկեալ ձայնին առ սուրբն ի վերուստ, որոց խնդութեամբ լցեալ մեծապէս ընդ ատուա. ծարհաշ ծագման յայտնեալ սրբոյ նշանիդ։ Աղ բարեխօսեա. և այլն։

Աղբիւր յորդառատ կամաք հզօրին անդա. նօր բղխիւր ի կաոս խաչիդ, ուստի զանազան ախտից սրբութեան ի քոյդ կատարի շնորհա. բաշխութիւն. առ որ պաղատիմք երկրպագելով՝ անկեալ առաջի կրօղիդ Աստուծոյ անլե. զու խօսել, անշունչ ճարտասան. մաղթեա ա. զատչին քեզ զազգս Ադամայ, մաքրելով զմեր հոգի, զշունչ և զմարմին ի խարդախութեանց հակառակողին. առաջնորդական հոգով բարու. թեան ընուլ զհայրապետն մեր զՏէր (..) եւ զուխտս բոլոր սուրբ եկեղեցւոյ հանդիսիւ վերնոցն պայծառանալ եւ զաստուածապաշտ արքայն մեր (..) զօրանալով ի կամս Աստուծոյ. ննջեցեալոց շնորհեալ թողութիւն՝ եւ փառաց հանգիստ. ահա յիշեսցես և ողորմեսցես փոխեցելոցն յուսով յաշխարհէ, աղաչեմ. յար երկանութեամբ զընթացս ի մարմնի առ քեզ ուղերձել խնդրեմք. խառեալապէս զանձինս և զմիմեանս ամենակալիդ Աստուծոյ յանձն առնեմ։

Նորհարաշ ծագմամբ երեւեալ աստուածեան խաչիդ, կրկին հայցուածովք երկիր պագանեմք, սրբակայելոյ համարձակութեամբ, լինել բարեխօս ընդ մեղաւորացս, ի կցորդութիւն մեծ վստահութեան կալցիս, զբստ մարմնոյ ծնողն Աստուծոյ, դնելով առաջի զմեծ փրկութիւնն՝ որ ի ձեռն զորձեաց աշխարհի. ոմն զանարատ զծնունդն և զանուղղ ջանքեալ զկուսականն կաթն և զփախուստն. ոմն ձաղանօք կոփումն և զլեղին, և աստուածասպան բերանոցն զթոյր. զփուշն և զքացախն և զմերկութիւնն և զոգեպահանջ բեւեռսն և զսէգն, զի տարաստիլի այս յիշատակաւ զարձեալ կեցուցէ, այժմ և յաւուր ահեղի։

---

# ՇԷՑՔՍԲԻՐ

## ՀԱՄԼԷԹ ԵՒ ՈՒՐՈՒԱԿԱՆՆ

*Համլէթ.*

*Դու զիս ուր կ'ուզես տանիլ։ Խօսէ, ալ չեմ գար հեռու։*

*Ուրուականը.*

*Մի՛ տ դիր ինձ։*

*Համլէթ.*

*Կը դընեմ։*

*Ուրուականը.*

*Գրեթէ հասեր է իմ ժամս,*
*Ցոր հարկ է որ ծըծըմբեայ, լըկիչ բոցոյ մէջ դառնամ։*

*Համլէթ.*

*Ո՛հ, եղուկ, թըշուառ հոգի։*

digitised by A.R.A.R.@